


1450

Yukonuk puppy



phschu
1897

83-3

Հ-96

ՆՈՐ ՄԱՏԵՎԱԴՐԱՆ

Ժ.

ԿԵՐԱՔԻ ԳՎՐՈՅ

Հ Ա Թ Ա Կ Ի

Ճերմաներկնից թարգմ.

Տիրուհի Կոստանեանց.



Թ. Ի Գ Լ. Ի Ս

Տպարան Մ. Շարամբէի, Կիշ. 21

1897

1112003

2011

291

83-3

2-96

Կ

ՆՈՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

Ժ.

ԿԵՇՆՔԻ ԳՊԲՈՅ

Հ Ա Ֆ Մ Ը Ն Ի

9
6025

Ճերմաներէնից թարգմ.

Տիրուհի Կոստանեանց.



Թ Ի Գ Լ Ի Ս

Յպարան Մ. Շարակի, Նիկոլ. փ. ա. 21

1897

Дозволено цензурою Тифлисъ, 12-го Мая
1897 г.

ԿԵՍՆՔԻ ԴՊՐՈՑ

Մի գերմանական ծովեզրեայ քաղաքում
ապրում էր մէկ հարուստ վաճառական իւր
միակ որդու, Ֆերդինանդի Հետ։ Այդ վաճա-
ռականի ազգանունը Գալբէրգ էր։ Նորա կի-
նը մեռաւ, երբ իւր որդի Ֆերդինանդը մի-
այն մի քանի ամսական էր և այդ պատճա-
ռով նա իւր բոլոր սէրը, խնամքը գործ դրեց
առանց մալր, որբ մնացած քնքոյշ արարածի
վերայ։ Մայրը մեռնելիս յանձնեց երեխային
Գալբէրգին, այս սրտաշարժ խօսքերով՝ «իմ
սիրոյ համար, կրթիր և մեր երեխային սի-
րով»։ Այդ խօսքերն արտասանելով, նա էլի
մէկ անգամ համբուրեց մանկանը և մի վեր-
ջին, տխուր հայեացք գցելով իւր ամուսնու
վերալ, մեռաւ։ Դորանից յետոյ զարմանալի
չէ, որ Գալբէրգն ուզենալով հանգուցեալի
կամքը սրբութեամբ կատարել, շատ անգամ
արդէն իւր սիրոյ ու խնամքի չափն անցնում
էր։ Այդ երեխան միակ արարածն էր, որ նո-

րան կտպում էր կեանքի հետ. նա աշխատում էր իւր որդու համար և նոյն իսկ նորա ապագայ հարստութեան համար իւր շոգենաւները լցնում էր բեռներով և ուղարկում էր ամենահեռու երկրներ ու սրտանց ուրախանում էր, երբ դորանից մեծ օգուտ էր ստանում: Դործերից լետոյ տուն վերաբառնալով, նա իւր առաջին պարտքն էր համարում ներս մտնել երեխայի սենեակը, որտեղ վարդի պէս բացուած, կարմրաթշիկ մանուկն ուրախուրախ ժպտում էր նորան տեսնելով և երկարացնում էր դէպի նա իւր հաստիկ ձեռքերը: Յետոյ նա դիմում էր երեխայի շրջապատողներին՝ հօրաքրոջը, գայեակին ու հարց ու փորձ էր անում, թէ արդեօք ֆէրդինանդի բոլոր ուզածները կատարել են իւր բացակայութեան ժամանակ. և վայ տնեցոց, եթէ որ նա տեսնէր իւր որդուն լալիս: Այդ տեսակ չափազանց խնամքից ու երես տալուց, ֆէրդինանդը դառաւ մի շատ լամառ տղայ: Նա ընական շատ բարի սիրտ ունէր և եթէ լաւ կրթութիւն ստանար, շատ լաւ մարդ կը դառնար, բայց այժմ, հօր թուլութեան շընորհիւ, նա փչացաւ:

Ֆէրդինանդը մեծանալով, դառաւ ամբողջ տան հոգսի առարկան: Դայեակները շա-

բունակ փոխւում էին, որովհետև ոչ մէկից գոհ չէր մնում հայրը. իսկ ֆէրդինանդն այնքան խելօք էր, որ շուտով հասկացաւ՝ թէ հայրն իւր իշխանութեան տակն է: Եւ այդպատճառով, եթէ որ մէկը չհնազանդէր նորան, կամ թէ նորա կարծիքով մէկն անարդար վարուէր իւր հետ և կամ մէկը դուր չգար իրան, բաւական էր, որ նա մի-երկու, երեք կաթիլ արտասուք թափէր և հայրը կաշխատէր ամեն կերպ իմանալ որդու լացի պատճառն ու իսկոյն կըկատարէր նորա կամքք:

Այդ տեսակ պատմութիւնները վերջանում էին նորանով, որ ֆէրդինանդի չհաւանած աղախնուն, կամ ծառային դուրս էին անում: Ալդպիսով, բնտկանից լաւ երեխան, շուտով դառաւ բոլոր տնեցոց չար ոգին. ծառաները նորան շողոքորթում էին երեսանց, այն ինչ սրտանց ատում էին և մինչև անգամ ֆէրդինանդի բարի հօրաքոյը Մարիամը վախենում էր նորանից:

Գալքէրգի ընկերները, որոնք նորտն անկեղծ սիրում էին, ցաւելով նայում էին այդտեսակ կրթութեան վերաւ և վատ հետեւանք. ներ էին գուշակում:

«Ես խոստացել եմ իմ հանգուցեալ կնոջս, սիրով ու բարութեամբ կըթել մեր

Ֆէրդինանդին» պատասխանում էր նա. «և իմ խօսքս կատարում եմ. երեխան հրեշտակի բնաւորութիւն ունի, իսկ ծառաները նորա հետ վարուելու ձեզ չգիտեն»:

— «Ով որ սիրում է իւր որդուն, նա նորան խելք ու շնորհք է սովորեցնում» — ասում էր շատ անգամ ծերունի բժիշկը, գլուխը շարժելով և աշխատելով հասկացնել իւր ընկերին, որ նա սխալում է այդ ձեռվ կրթելով իւր երեխային:

— «Ինչո՞ւ համար ես պատժեմ տղային, սարսափով բացականչում էր նա. երեխան ոչ մէկին վատութիւն չի անում»:

Երբ որ ֆէրդինանդը տասը տարեկան դառաւ, այն ժամանակ նորա վարժուհիների թիւը անհաշիւ էր: Պատահում էր, որ երեմն ֆէրդինանդը հաւանում ու սիրում էր վարժուհիներից մէկն ու մէկին և ներում էր նորա խիստ վարժունքն իրան հետ. բայց այդպիսի դէպէերումն էլ, հայրը մի դատարկ բանի համար դուրս էր անում այդ վարժուհուն և որդին նոր վարժուհի էր ունենում:

— «Ֆէրդինանդին պէտք է տղամարդու ձեռքի տակ կրթել.» վերջապէս վճռեց Գալերդը, երբ նորան արդէն ձանձրացրին թէ որդու և թէ վարժուհիների անվերջ գանգատ-

ները և երբ միսս (օրիորդ) Բէրտըրամը, հիանալի՛ անգղիացի վարժուհին յայտնեց, որ ինքը կըհեռանալ, որովհետեւ այլ ևս չի կարող տեսնել այդ տեսակ անմիտ ու վատ դաստիարակութիւն:

— «Հիմա արդէն իսկ ժամանակն է նորա համար մի վարժապետ բռնել և պարաստել տալ գիմնազիօնի համար» ասում էր Գալերդը:

— «Ձեր որդուն չեն օգնի ո՛չ վարժապետները և ո՛չ էլ ուսումնարանները, նորան կ'օգնէ միայն կեանքի դպրոցը և այն էլ միայն այն ժամանակ, երբ նորա հետ այդ դպրոցը խիստ վարուի. նորա փրկութիւնը միայն դորա մէջն է». անկեղծ սրտով ասաց երիտասարդ վարժուհին և աւելացրեց՝ «գուշ երեխային փչացնում էք ձեր անմիտ սիրելով»:

Գալերդի սրտին շատ դիպան այդ պարզ աղջկայ խօսքերը և նա շտապեց նորան հեռացնել իւր տանից:

Մինչև հիմայ ֆէրդինանդը շարունակ լսում էր իւր հօրը. նորա բոլոր չարութիւնները տեսնում ու տանում էին միայն խեղճ վարժուհիներն ու նորա հօրաքոյրը: Բայց ալժմ ուրիշ կերպ փոխուեց. — վարժապետները չէին ուզում վարժուհիների նման սուս ու

փուս տանել ամեն բան: Բայց այս դէպքումն էր, չնայելով վարժապետների գանգատներին, հայրն աշխատում էր ներել որդուն, բոլոր մեղքը գցելով վարժուհիների վրայ և խնդրում էր, որ նոքա աւելի համբերող և ներող լինին:

— «Իմ սկզբունքս է՝ կրթել որդուն սիրով». ասում էր նա: Նորա համար դժբախտ օր էր այն օրը, երբ վարժապետի կամքով ստիպուած եղաւ պատժել ֆէրդինանդին և թողնել նորան առանց ճաշի: Միևնույն ժամանակ, երբ վարժապետը ճաշին ուտում էր մեծ ախորժակով, Գալբէրգի կոկորդին դէմ էր առնում ամէն մէկ կտորը, միւս սենեակից լսում էր փոքրիկ խոռվարաբի ճիշն ու լացը, որին այդ անսովոր պատիժը շատ անդուր էր: Խոկ երբ վարժապետն ուզեց դորա համար աւելի ևս պատժել աշակերտին, այն ժամանակ հայրը շատ թունդ կռուեց վարժապետի հետ, այնպէս որ հէնց նոյն երեկոյեան նա հեռացաւ հարուստ վաճառականի մօտից: Ուղիղ է, Գալբէրգն ուզեց խրատ կարդալ որդու գըլխին, բայց չկարողացաւ. Ֆէրդինանդն այնքան նման էր իւր մօրը, որ այդ նմանութիւնը տեսնելուն պէս, թոյլ կամքի տէր հայրը մոռանում էր բոլոր խստութիւնները:

«Միայն սէր, միայն սէր» բացականչում էր նա և աւելի ու աւելի ներողամիտ էր լինում դէպի որդու պակասութիւնները:

Վարժապետները գալիս ու դարձեալ հեռանում էին: Մի ժամանակ Գալբէրգի ընկերոջ որդին, որ Ֆէրդինանդի հասակակիցն էր, սկսեց նորա հետ դաս առնել, բայց այդ էլ երկար չտևեց:

— «Վարժապետները կողմնապահ են. նոքա գովում են ընկերոջս տղային, իմ որդուս վատ ասելու համար». ասաց Գալբէրգը և հեռացը Ֆէրդինանդի դասընկերին:

Ֆէրդինանդը չունէր ոչ մի ընկեր, ուրովհետև ոչ ոք չէր ուզում հնագանդուել հաճուքներին. այնպէս որ նա միայն խաղում էր իրանց խոհարարուհու որդի Պետրոսի հետ: Դոցա մտերմութեան մասին խօսք էլ չէր կարող լինել, որովհետև Ֆէրդինանդն իրան աղայ էր կարծում, իսկ Պետրոսը գերի: Բայց Պետրոսը Ֆէրդինանդից մեծ և խելօք էր. նա իւր խոհեմութեամբ կարողացաւ իւր ընկերին ձեռքն առնել: Բաղդաւորապէս Պետրոսը չար սիրտ չունէր, այլ միայն թեթևամիտ էր և դէպի իւր առատ ընկերը սրտով կպած էր, իսկ Ֆէրդինանդը փողի կարօտութիւն չունէր,

որովհետև հայրը միշտ նորան բաւական շատ
տալիս էր:

— «Ինչու համար է իմ հարստութիւնս». Հանգստացնում էր ինքն իրան հայրը, երբ
գիտակցութիւնը նորան ասում էր, որ վատ
է իւր արածը:

Երբ Ֆէրդինանդը տասն և չորս տարե-
կան դառաւ, հայրը նորան տուեց քաղաքա-
կին դպրոցը: Չնայելով որ Ֆէրդինանդը ծոյլ
էր, բայց ընդունակ լինելով, լաւ էր սովո-
րում:

Նա շատ լաւ ուսուցիչներ ունէր, այն-
պէս որ յաջող քննութիւն բռնեց և մտաւ
բարձր դասարան: Իրան հասակակիցների հետ
միասին ապրելը, նոցա հետ սովորելը և վեր-
ջապէս այդ կեանքի փոփոխութիւնն ու նո-
րութիւնը սկիզբը շատ հետաքրքրեցին Ֆէր-
դինանդին: — Նա աւելի խելօքացաւ, աւելի
ուրախ էր և աւելի շատ էր խօսում. այն-
պէս որ բոլոր տնեցիք իրանց տանջող տղայի
մէջ ալդպիսի մեծ փոփոխութիւն տեսնելով,
զարմացած էին մնացել: Միայն Պետրոսը բա-
ւական չէր, որ նա փոխուել էր, որովհետև
Ֆէրդինանդն էլ շատ չէր խաղում նորա հետ
և փախչում էր նորանից: Հայրը շատ էր հը-

պարտանում, որ գիմնազիոնի աեսուչը գոհ է
Ֆէրդինանդից:

— «Դուք բոլորդ էլ դեռ կը համոզուէք,
որ երեխայի կրթութիւնն առաջ տանողը մի-
այն սէրն է», ասում էր նա իւր քրոջը, որը
կառավարում էր ամբողջ տունը: Բայց հօր
ուրախութիւնը դեռ վաղաժամ էր:

Դպրոցի կարգ ու կանոնը շուտով ձանձ-
րացրեց Ֆէրդինանդին: Վարժապետներն ըս-
կըսեցին գանգատուել. նա շարունակ չարու-
թիւն էր անում, չէր լսում ոչ ոքի. նորան
բոլորի առաջ նկատողութիւններ էին անում
և սպառնում էին խիստ կերպով պատժել:

Ֆէրդինանդն երես առած լինելով, չէր
կարող իւր դժգոհութիւնը ծածկել և վճռեց՝
իրան պատժող ուսուցչից անպատճառ վրէժն
առնել: Բարկութիւնից բոլորովին գունա-
տուած նա տուն վազեց և գանգատուեց հօ-
րը, թէ ինչպէս կոպիտ են վարուել իրան
հետ:

Բայց զարմացած մնաց, որ հայրը բոլո-
րովին միտք չունի ոչ վարժապետին մեղա-
դրելու և ոչ էլ իրան դպրոցից հանելու:

— «Դու գիտե՞ս, որդիս» ասաց հայրը
քաղցրութեամբ, «որ ես միշտ ներում էի քո
սխալները, բայց ալժմ ես քեզ մեղաւոր եմ

համարում, որովհետև դու վարուել ես դըպ-
ըոցի կանոններին հակառակ։ Եղիշ աշխատա-
սէր, կարգին ու հնազանդ, այն ժամանակ
քեզ ոչ ոք չի նեղացնի. ինձ ինքը պարոն
տեսուչն ասաց, որ ամենքն էլ քեզ միայն
բարի են ցանկանում։ Խաղալու ժամանակն
անցաւ. հիմայ դու երիտասարդ ես, իսկ կեան-
քը շատ լուրջ բան է։

Դեռ հայրը նորա հետ այդակէս չէր խօ-
սել և Ֆէրդինանդը չգիտէր հաւատա՞ր իւր
լսածին։ Նա թէև սաստիկ դժգոհ մնաց հօ-
րից, բայց ցոյց չտուեց, թէ դժգոհ է և վըճ-
ռեց, որ այդ դրութիւնից ելնի տանից փախ-
չելով։

Այդ ժամանակ նորա հին ընկեր Պետ-
րոսը դարձեալ իրան պէտք եկաւ. — Ֆէրդի-
նանդն իւր գաղտնիքը նորան ասաց և այդ-
պէս, երկուսով սկսեցին մտածել, թէ ի՞նչ
կերպ առաջ տանեն իրանց նպատակը։ Ֆէր-
դինանդի մօտ փող քիչ էր մնացել և նա չէր
վստահանում նորից դիմել հօրը, որովհետև
չէր ուզում կասկածի տեղիք տալ և մերժումն
ստանուլ նորանից։ Այդ պատճառով իւր ունե-
ցած ոսկի իրեղէնները տուեց Պետրոսին, որ
ծախէ և դորանից յետոյ մնում էր սպասել
մի յարմար ըսպէի, որ գլուխ բերէր իրան

ուզածը։ Պետրոսն էլ շատ էր ձանձրացել վա-
ճառատան մէջ աշխատելուց և ճանապար-
հորդելու ու զանազան երկրներ տեսնելու
միտքը նորան շատ էր գրաւում. այնպէս որ
նա համաձայն էր փախչել Ֆէրդինանդի հետ։
Իսկ Ֆէրդինանդն այնպէս էր զայրացած իւր
հօր անարդար վարմունքի վերայ, որ բոլորո-
վին մոռացաւ հօր սէրը։ Ափսոս, որ այդ ժա-
մանակ Ֆէրդինանդը չունէր ոչ մայր, ոչ հա-
ւատարիմ ընկեր, որոնք կարողանային ազդել
նորա սրտի վերայ։ Խեղճ հայրը չէր էլ կաս-
կածում, թէ որդու սրտում ի՞նչ չար բաներ
են կատարւում և մինչև անդամ զարմացաւ,
երբ նորան տեսաւ ընթրիքի նստած նոյն տը-
խուր երեսով, ինչպէս որ այն օրը ճաշին,
երբ մերժեց նորա խնդիրքը՝ հանել նորան
գիմնազիօնից։

Միւնոյն ժամանակ մի քանի օր անցաւ,
բայց ոչ մի փոփոխութիւն չէր երկում տան
մէջ։ Ֆէրդինանդը, չնայելով որ հօրաքոյրն
աշխատում էր ամեն կերպ ուրախացնել նո-
րան, շարունակ լուռ էր, դժգոհ ամեն բա-
նից և միայն հօր մօտ աշխատում էր ծածկել
իւր վատ տրամադրութիւնը։ Նա անուշադիր
էր դէպի դասերը, թէև ամեն օր, բայց ա-
կամայ գնում էր դպրոց և սպասում էր յար-

մար դէպքի, որը շուտով առաջ եկաւ: Ուսուցիչները շատ անբաւական էին, որ Ֆէրգինանդը դասերը լաւ չէր պատրաստում և աւելի խիստ էին վարւում, տեսնելով նորայամառութիւնը. ամեն օր նոր-նոր գանգատներ էին լսւում ու պատիժներ էին նշանակում: Եւ ահա, մէկ գեղեցիկ օր, երբ Ֆէրգինանդին իբրև պատիժ թողին դպրոցում, որովհետեւ լատիներէն դասը չէր սովորել, նա այդ երեկոյ այլս տուն չվերադարձաւ:

Փախուստի համար ամենալաւ ժամանակն էր ընտրել Ֆէրգինանդը, որովհետեւ հայրը մի քանի օրով հեռացել էր քաղաքից, իսկ հօրաքոյրն այն ժամանակ միայն սկսեց անհանգստանալ, երբ մութն ընկել էր, դըսի դուռը պէտք է արգէն կողպէին և ծառանեկաւ իմանալու, թէ տանն է երիտասարդ պարոնը: Տնեցիք գիշերը մեծ իրարանցումի մէջ էին. իսկ երբ լուսացաւ, ուղարկեցին բոլոր ծանօթների մօտ իմանալու Ֆէրգինանդի մասին. բայց երեաց, որ ոչ ոք ոչինչ չգիտէր: Գիմնազիօնի տեսուչն ասաց, որ Ֆէրգինանդին պէտք է պատմէին և դասերը վերջանալուց յետոյ նա իսկոյն տուն է վագել: Անպէս էին քացատրում նորա խորհրդաւոր կերպով անհետանալը՝ որ նա պատմից վախե-

նալով և յամտութիւնից դրդուած, կամ փախել է, կամ իրան սպանել է: Հօրաքոյրն յուսահատուած էր. նա լալիս ու գանգատում էր, որ երկի իւր սիրելի Ֆէրգինանդին դըպրոցում շատ են չարչարել. և նա բարկութիւնը թափում էր անմեղ ուսուցիչների վերաբթէս նա մի քիչ միամտուեց, երբ իմացաւ, որ Պետրոսն էլ տուն չէ վերադարձել նոյն օրը և չկան Ֆէրգինանդի շատ իրեղէնները:

— «Անպէտք խոտը տանող չի լինի» փնթփնթում էր ծերունի կառապանը, իւր երիտասարդ պարոնին զուր փնտոելուց վերադառնալով:

— «Երբ այդպիսի երկու անպէտք տղայք միասին են լինում, այն ժամանակ իրար օգնում են: Երիտասարդ պարոնը զեռ կը վերադառնայ. ախ, եթէ ծերունի պարոնս ինձ թոյլ տար սկզբից նորան իմ ձեռքս առնելու ու մի լաւ խրատելու, ինչպէս գոհ կըլինէի: Աստուած ինչո՞ւ է ստեղծել այդպիսի անշնորհք արարածին: իսկ Պետրոսը, — նա էլ նորան յարմար ընկեր է.. այ, թէ սազում են մէկը միւսին»: Հօրաքոյրը չէր լսում կառապանի այդ յանդուգն խօսքերը և միայն շարունակում էր լալ ու հառաչել. վերջը նա իւր եղբօրը հեռագրով իմաց տուեց բոլոր

պատահածի մասին։ Հայրն եկաւ անմիջապէս և նորից սկսեցին որոնել Ֆէրդինանդին, բայց գնուր. ոչ ոք չգիտէր երկու փախստականների տեղը. միայն Գալբէրդի շոգենաւի նաւաստիներից մէկն ասաց, որ կարծես յիշում է՝ թէ տեսել է երկու տղայի, ձեռքերում կապոցներ բռնած, բայց նոցա վերայ առանձին ուշադրութիւն չէ դարձրել։

Այդ նոյն երեկոյեան անթիւ շոգենաւեր էին ճանապարհ ընկել դէպի աշխարհիս զանազան կողմերը, գուցէ և դոցանից մէկն ու մէկի մէջ էր տեղաւորուել փախստական Ֆէրդինանդը։ Խեղճ հայրը շատ տխուր և անմխիթար էր, որովհետեւ նա մի քանի շաբաթից յետոյ միայն, այն էլ յաջող պայմաններում, երբ վերադառնային շոգենաւերը, կարող էր իմանալ, թէ արդեօք որդին եղել է նոցանից մէկի մէջ։ Որ իմացան Պետրոսի և Ֆէրդինանդի շատ իրեղէնների կորչէլը, այլ ևս չէին կարծում, թէ Ֆէրդինանդն ինքն իրան սպանել է։

Մեզ արդէն յայտնի է, որ Ֆէրդինանդը շատ բան ծախեց իւր ունեցածից, որ ճանապարհին փողի նեղութիւն չքաշէ։ Դժբախտ հայրը, թէ ինչպիսի դառն օրեր ու գիշերներ էր անցկացնում, այդ դժուար է նկա-

րագրելը։ Նա զզջում էր իւր տուած վատ դաստիարակութեան համար. նորա խիդճը տանջում էր և սիրտը լցուած էր ահ ու դողով իւր որդու համար։ Եւ միայն ծերունի բժիշկը, որն այցելում էր նորան ամեն օր, խրատելով ու մխիթարական խօսքերով հանգըստացնում էր թշուառ հօտք։ Այդ ազնիւ ընկերն ու բժիշկը բաց արեց վերջապէս հօր աչքերը և ցոյց տուեց նորա բոլոր սխալները Ֆէրդինանդի կրթութեան մէջ, նա ցոյց տուեց այն անդունդը, որի ծայրին կանգնել էր նա և այն ողորմելի՛ ապագան, որ նա պատրաստում էր իւր սիրելի տղայի համար։ Այն ժամանակ հայրը դառն կերպով զզջում էր, արտասուքն աչքերին, ասելով՝ «ախ» ես էլ երբէք չպիտի կարողանամ տեսնել իմ միակ որդուն և ուղղել իմ արած սխալները։ Ծերունի ընկերն աշխատում էր նորան մխիթարել ասելով։

— «Հանգստացէք, նա դեռ կը վերադառնալ. նորան շատ օգտակար կը լինի փորձուել կեանքի մէջ»։

Այդպէս անցնում էին շաբաթներ ու ամիսներ։ Զանազան շոգենաւներից լուրեր էին հարցնում, բայց Ֆէրդինանդն ու Պետրոսն անյալացել էին և ոչ ոք նոցա տեղը

չգիտէր: Այդ նոյն ժամանակները դէպի Աւստրալիա մի առաջաստաւոր նաւ էր ուղևորուել, որի մասին մոռացել էին հարց ու փորձ անել և ահա դորա մէջն էին երկու փախստականները:

Ժամանակն անցնում էր: Եկաւ ձմեռը, իսկ հարուստ վաճառականի տունը նոյնպէս տխուր էր, ինչպէս և այն մարտ ամսուայ երեկոն, երբ այդ տան միակ որդին ու ժառանգը կորաւ: Հօր մագները բոլորովին սպիտակեցին, այտերը ներս ընկան, աչքերն արտասուքից խաւարեցին, իսկ լոյսը մեռաւ նորա սրտում: Մինչև տնգամ բարի բժշկի մը խիթարական խօսքերը կորցլին նորա համար իրանց ոյժը:

— «Ֆէրդինանդը մեռել է», անյուսալի կերպով կըկնում էր հայրը: — «Չնայելով Ֆէրդինանդի պակասութիւններին, նա այնու ամենայնիւ բարի սիրտ ունէր և եթէ նա մեռած չլինէր, հօրն անպատճու կըլիշէր և կըգրէր իւր մասին», ասում էր անբախտ հայրը:

Պետրոսի մայրն էլ համոզուած էր, որ իւր որդին այլ ևս չի վերադառնայ և չնայելով որ Դալբէրգը նորան կենսաթոշակ էր տալիս, նա դարձեալ առանց դառնութեան չէր կարող լիշել Ֆէրդինանդին, որը պատ-

ճառ եղաւ կորչելու իւր միակ որդուն ու միակ միխիթարութեանը:

— Յանկարծ, — և այդ պատահեց ճիշդ Ծննդեան առաջին գիշերը, 1864 թ. հօրաքոյը Մարիամը փայլուն աչքերով, վշտացած հօրը տուեց երկու հաստ ծրար, Աւստրալիայից եկած, որոնց մէկի հասցէն գրուած էր Ֆէրդինանդի ձեռքով: Ո՞վ կարող է արդեօք նկարագրել հօր ուրախութիւնը: — «Իմ զաւակս, իմ սիրելի զաւակս, նա կենդանի է» լալով ասում էր խեղճ ծերունին և բաւական ժամանակ անցաւ, մինչև որ նա կարողացաւ բանալ նամակը և կարդալ բարձր ձախով: Ահա նամակի բովանդակութիւնը՝

— «Իմ պաշտելի, վշտացեալ հայրիկս»:

«Հեռուից մտքով չոքում եմ քո առաջ, համբուրում եմ քո ձեռքերը և խնդրում եմ քեզ՝ ների՛ր քո մեղսուոր, բայց զլշացած որդուն: Նա խիստ կերպով պատժուեց, բայց ոչ այնքան խիստ, ինչքան որ արժանի էր: Կեանքի դպրոցը նորան կարգ ու կանոնի տակ դրեց և ոչնչացրեց նորա մէջ ծուլութիւնն ու անհոգութիւնը: Ինը պոչանի կատուն շատ անգամ պարում էր քո տղախի մէջքի վերայ, որին, գու քո բարութիւնից, մատով չէր դիպչում երբէք: Ո՞հ, հայրիկս, ես հաս-

կացայ քո դէպի ինձ ունեցած սէրն ու խնամքը և երբ ես ինձ մանրամասն քննում եմ, ուղղակի սարսափում եմ ինձանից, որովհետեւ ես քո այդ սէրը և ինձ վերայ դրածդ լոյսը չարդարացրի: — Ես այժմ անկեղծ զղջում եմ և եթէ Աստուծոյ ողորմութիւնն ու քո ներումն ինձ թոյլ տան վերադառնալ հայրենիք, այն ժամանակ իմ միակ աշխատանքս պէտք է լինի քեզ ցոյց տալ, թէ որչափ լուրջ է իմ զղջումը և իմ ուղղուելու ու մարդ դառնալու ցանկութիւնը:

Հիմայ թոյլ տուր ինձ պատմել, թէ ինչ պատահեց Պետրոսին և ինձ այն ըոպէից, երբ մենք փախանք թանկագին հայրական տանից:

Այն չարաբաստիկ մարտի առաւօտը, երբ ես բարկացած դուրս փախայ դպրոցից, նոյն այդ ըոպէին որոշեցի այլ ևս չվերադառնալ այնտեղ: Բայց եթէ դու տանը լինէիր և ես տեսնէի քո սիրով լի հայեցքը, երևի կըթողնէի իմ վատ մտադրութիւնը: Բայց այսպէս պատահեց, որ դու չկայիր, ես էլ մենակ էի. քեզանից շատ նեղացած էի, որ դու իմ թըշ. նամիներիս պաշտպանելով, խիստ խօսքերով աշխատում էիր ինձ խրատել: Այս, սիրելի հայրիկ, ես մի ողորմելի՛, թոյլ տղայ էի և արժանի չէի քո սիրոյն: Ես այն ըոպէին վա-

գեցի Պետրոսի մօտ. Նա արդէն պատրաստ էր. մենք վաղուց նորա հետ պայման էինք կապել... Նա բարի ու թեթևամիտ լինելով, երկար չմտածեց, որովհետև նա շատ էր ուղում ծովի կեանքը տեսնել և ինձ էլ սիրում էր, այնպէս որ անպայման հնագանդուեց ինձ: Ճաշից յետոյ մենք զանազան ճանապարհներով գնացինք դէպի նաւահանգիստը. օրը մուայլ էր և շուտով մութն ընկաւ. Պետրոսը տանում էր մեր կապոցները, իսկ փողն ես ինձ մօտ էի պահել:

Ժամը եօթին «Արծիւ» անունով նաւը գաղթականների համար, պէտք է ճանապարհ ընկնէր: Մենք աննկատելի կերպով ժողովրդի միջից բարձրացանք նաւի պատշգամբի վերայ. Ես այնտեղ երկու տոմսակ առայ և սարսափեցի, տեսնելով թէ որչափ քիչ փող մնաց մօտս: Ինձ վախեցնում էր երբորդ կարգի ճամբորդների այս ու այն կողմն ընկած հիւանդոտ, կեղտոտ տեսքը. քիչ մնաց, որ ես տուն վերադառնայի, բայց արդէն ուշ էր. յամառութիւնն էլ ինձ նոր ոյժ տուեց և ես մնացի: Հիմայ ես համոզուած եմ, որ Աստուծոյ կամքն ինձ պահեց այնտեղ և ստիպեց ինձ անցնել կեանքի դժուար դպրոցի միջից: Նաւի վերայ մենք մեզ շատ վատ էինք

զգում։ Հենց նոյն գիշերն իմ ոսկէ ժամացոլցն ու շղթան, քո ընծան թանկագին հայրիկս, գողացան ինձանից և երբ ես ուզեցի գանգատուել, մեզ շրջապատող մարդկանց բռունցքներն ու զարհուրելի դէմքերն ինձ ստիպեցին լռել։ Շրջապատուած լինելով փըշացած, աղքատ, խարդախ մարդկանցով, մենք շատ երկար օրեր հիւանդ պառկեցինք։ Եւ այդ ժամանակ, սիրելի հայրիկս, ես սովորեցի ճանաչել Աստծուն։ Պետրոսը դէպի ինձ չափազանց ուշադիր էր և չնայելով որ ես պատճառ եղայ նորան այդ անյաջող ճանապարհորդութիւնն անելու, բայց նա ինձ վերայ հարազատ եղօր պէս հոգս էր տանում։ Նա ինձանից աւելի շուտ առողջացաւ, մօտեցաւ նաւաստիների հետ և նոցա միջոցով մեզ թոյլ տուին պատշգամբի վերի մասում մնալ, որտեղի ծովալին, թարմ օդը մեզ վերայ լաւ ազդեց. մենք ուրախութեամբ քնում էինք պատշգամբի մի անկիւնում, քան երրորդ կարգի խեղդուած, տօթ բաժանմունքում։ Բայց երբ նաւապետը մեզ առաջին անգամ նկատեց, ուզեց մեր անցաթուղթը և երբ ասացինք, որ չունենք, նա շատ բարկացաւ ու սպառնաց, որ մեզ կըթողնի առաջին պատահած անմարդաբնակ կղզու վերայ։ Միայն մեր

լալագին խնդիրները լսելով, թողեց իւր այդ միտքը. բայց դորա փոխարէն մենք ստիպուած եղանք պատմել նորան բոլոր ճշմարտութիւնը և այդ ժամանակ մեր խայտառակութիւնը լոյս աշխարհ եկաւ։

— «Ես այդպէս էլ կարծում էի.» բացականչեց զայրացած աղնիւ նաւապետը։

— «Սպասեցէք, դուք անպիտաններ, ես ձեզ չոյց կըտամ, թէ ինչ բան է տանից փախչելը. դուք երևի ուզեցել էք ծանօթանալ ինհիլ պոչանի կատուի հետ։»

— «Է՞ի, Գարրի» կանչեց նա գլխաւոր նաւաստիին. «Հաւաքի՞ր ու կանչի՞ր այստեղ բոլոր նաւաստիներին. ես ուզում եմ ինձ վերայ առնել ծնողի պաշտօն։» Եւ մենք դեռ ուշքի չէինք եկել, երբ իննը պոչանի կատուն (իննը բարակ կաշուէ ծայր ունեցող մտրակ է) սկսեց պարել ու թռչկոտել մեր մէջքերի վերայ։ Ցաւն անտանելի էր, բայց երբ ես նկատեցի, որ իմ գորգոռոցս միայն ծիծաղ է պատճառում ամենքին. այն ժամանակ ատամներս ամուր իրար խփեցի ու լուռ մնացի մինչեւ վերջը։

Պետրոսը, որ արդէն իւր բաժին ծեծը կերել էր, բոլոր ժամանակ խնդրում էր, «Ո՞ր ինձ ազատեն, բայց նաւապետն ասաց՝

— «Ո՞չ, ո՞չ, այս երես առած, քնքոյշ ձեռքերով ու չար սրտով տղակին պէտք է լաւ դաս տալ»: Եւ այդպէս, չպակսեցրին գոնէ մէկ հարուած:

Բայց յետոյ Պետրոսն ու էլի մէկ ծեր նաւաստի սկսեցին ինձ խնամել. նոքա ինձ ծածկեցին փափուկ, տաք վերմակով և ես յոդնած ու տանջուած այդ ամեն տեսածիցս ու կրածիցս, իսորը քնեցի, մոռանալով իմ վիշտը: Բայց երազումս քեզ տեսայ այդ գիշեր և այդ ըստից մեծ փափագ էի զգում հայրենիք վերադառնալ և շատ ուրախ էի որ ինձ մտրակեցին. որովհետև Փիզիքական ցաւս առժամանակ ինձ մուացնել տուեց հոգեկան տանջանքս:

Նաւապետը նկատելով Պետրոսի ճարպի կութիւնն ու քաջութիւնը, նորան յանձնեց նաւաստիներին, որ սորվեցնեն նորան իրանց արհեստը. իսկ ինձ իրան մօտ ծառայութիւն տուեց և վայ ինձ, եթէ մի որևէ բան մոռանայի, կամ չլսէի, որ նա ինձ կանչում է: Բայց չնայելով, որ նա ալդքան խիստ էր ու շարունակ իմձ հալածում էր իմ սխալներիս համար, այնուամենայնիւ նորա մէջ երևում էր հայրական գութ ու խնամք դէպի ինձ:

— «Դու դեռ ինձնից շնորհակալ կլինես,

պստիկ տղայ»: շատ անգամ կրկնում էր նա: — Սիրելի՝ հայրիկ, քո անունը նորան լաւ ծանօթ էր, բայց նա ինձ չէր թոյլ տալիս քեզ գրելու, չնայելով որ շատ առագաստաւոր նաւեր կարող էին քեզ հասցնել իմ նամակներս:

— «Եթէ դու շատ անհանգիստ ես հօրդ համար, քեզ տեղն է, մտածիր ու տանջութիր քո արածի վերայ. իսկ քո հայրը լաւ գիտէ, որ անպէտք խոտը տանող չի լինի. թէ որ Աստուած կամենայ, գու բոլորովին ուղղուած ու լաւ մարդ դառած նորից կըդնաս հօրդ մօտ: Մելբուրն քաղաքից գու կարող ես գրել. ես այնտեղ քո հօր մէկ լաւ ընկերոջը ճանաչում եմ, որի մօտ քեզ կըտեղաւորեմ. իսկ թեթևսօլիկ Պետրոսին կըպահեմ մեր նաւի համար և նորան լաւ նաւաստի կըդարձնենք:

Այդպէս էր ասում խիստ, բայց բարի ու ազնիւ նաւապետը և ես երբէք չեմ մոռանայ նորա արած լաւութիւնը: Եթէ ես կարգին մարդ դառնամ, գորանով պարտական կըլինեմ նորա խստութեանը. շնորհակալ եմ և իննը պոչանի կատուից... Քո հրեշտակալին բարութիւնը գուր է կորել և ես արժանի չէի քո այդչափ սիրոյն. միայն կեանքի լուրջ դպրոցն ինձ խելք ու շնորհք սովորեցրեց:

Երբ փչում էր քամին ու ալիքները կատաղութեամբ դիպչում էին շոգենաւին և իմ շուրջս լսում էր հայհոյանք ու վայրենի ձայներ, այն ժամանակ լիշում էի իմ վարժապետներին, որոնց հետ ես այնքան կոպիտ ու անարդար էի վարւում։ Աղաչում եմ, հայրիկս, ներիր ինձ։ Հիմայ արդէն երկու ամիս է, որ ես Մելքուրն քաղաքումն եմ, քո ընկեր Գօդ-սօնի մօտ։ Նա ինձ սիրով ընդունեց և տեղաւորեց իրան մօտ։ Նա էլ քեզ կըդրէ ու կըսպասէ քո կարգադրութեանը։ Ես նորա մօտ ծառայում եմ և աշխատանքից աչք չեմ բաց անում։ Ես առողջ ու ուրախ եմ, միայն կուգէի իմանալ, թէ դու ինչպէս ես քեզ զգում, անմոռանալի՝ հայրիկս և թէ արդեօք կըներէս քո վատ Ֆէրդինանդին։ Քո ներումն ոյժ կըտայ ինձ շարունակելու իմ սկսած գործը, որովհետեւ ես այստեղ ուզում եմ մնալ այնքան, մինչև որ ինձ չզգամ բաւական ուղղուած և ուժեղ, որ հայրենիք վերադառնալով օգնեմ քեզ քո գործերի մէջ։ Բարի և անձնուէր Պետրոսը մնաց նաւապետ Շմիդի մօտ, «Արծիւ շոգենաւի վերայ։ Ինձ շատ դըժւար էր բաժանուել նրանից, բայց մենք երեմն տեսնում ենք։ Թէև դուք էլ նորան աւելի շուտ կըտեսնէք, քան ինձ։ Նա նոյն-

պէս նամակ է գրել իւր խեղճ մօրը, որն իմ մեծաւորիս նամակի մէջն է։ Ես համոզուած եմ, որ դու կ'օգնես Պետրոսի մօրը։ Թող նա էլ ինձ ներէ։ Հազարաւոր բարեների բարի հօրաքրոջս, որին ես այնքան նեղացնում էի։ Մեր բժշկին և բոլոր ծառաներին, որոնց ես գեռ երեխայութիւնիցս այնքան չարչարում էի։ Խնդրում եմ, որ նոքա նոյնպէս ինձ ներեն։ Ես կ'աշխատեմ նոցա մօտ վերադառնալ բոլորովին փոխուած ու լաւ մարդ դարձած։ Ես այժմ սովորում եմ աշխատել և ականջ գնել մեծի խօսքին։ Աստուած թող քեզ պահ-պասէ, իմ բարի հայրիկս։ Թող այն ամեն մէկ արտասուքի կաթիլը, որ թափել ես ինձ համար, ժամանակին բերէ քեզ երկնքի օրհնութիւնը»։

«Քո զղջացած որդի Ֆէրդինանդ»։

Այդ նամակից լետոյ արդէն անցել էր վեց տարի և Գալեէրգն օրէցօր սպասում էր այն շոգենաւին, որով Ֆէրդինանդը պէտք է վերադառնար իւր հայրական տունը։ Այդ ժամանակամիջոցում Պետրոսն արդէն մի քանի անգամ եկել էր հայրենիք։ Նա արևից այրուած, առողջ ու զուարժ տեսք ունէր և նորան թէ իւր մեծաւորները և թէ ընկերները շատ սիրում ու յարգում էին։ Նա միշտ Ֆէր-

դինանդի մասին լաւ-լաւ լուրեր էր բերում և նորա հօր նամակները հասցնում էր ֆէր-դինանդին:

Ծերունի Գալբէրգը համոզուաշ լինելով, որ որդին կենդանի է, առողջ և ամենալաւ ճանապարհի վերայ է, զուարժացաւ և առողջացաւ: Բոլոր տնեցիք անկերծ ուրախութեամբ սպասում էին Ֆէրդինանդի վերադարձին, որին ամենքն էլ վաղուց արդէն ներել էին: Բոլորն ուզում էին նորան հանդէսով հանդիպել. — աղախինները փունջ էին կապում, խոհարարուհին ամեն կերպ աշխատում էր, որ ճաշը համով գուրս գալ, իսկ կառապանը շվշացնելով ու երգելով սրբում էր ձիաներին և սարքում էր կառքը, որ գնայ նաւահանգիստ բերելու իւր երիտասարդ պարոնին:

Վերջապէս հասաւ այդ հանդիսաւոր օրը: Յունիսի պայծառ արել լուսաւորում էր Ֆէրդինանդին սպասող ուրախ երեսները: Ամեն ըովէ սպասում էին շոգենաւի գալուն և վաղ առաւտից տան մէջ իրարանցում էր ընկել. ամեն տեղից ծաղկի և համով ու հոտով քաղցրեղէնների հոտ էր փշում և ծերունի հայրը նստած իւր սենեակում, յուզուած ու ուրախութիւնից բարախող սրտով, սպասում էր միակ որդուն:

— «Ես ինքս չեմ ուզում գնալ նաւահանգիստ»: ասաց նա. « մեր հանդիպումը հարկաւոր չէ, որ լինի ալդքան օտար մարդկանց մօտ»:

Բայց կառքը զուր էր սպասում նաւահանգիստի աւաշ. հօրաքոյր Մարիամը կառքում նստած, զուր էր իւր ծերացած աչքերով վինտուում Ֆէրդինանդին: Նա սաստիկ անհանգիստ էր և արդէն ուզում էր կառապանին պատուիրել, որ տուն վերադառնայ, բայց այդ միջոցին նորա մօտից անցաւ մի նստաստի, որին նա հարցըեց՝ թէ արդեօք նոնաւաստի, որին նա հարցըեց՝ թէ արդեօք նոնաւաստից շէ եկել Ֆէրդինանդը: Նաւաստին մի ըովէ մտածելուց յետոյ պատասխանեց՝

— «Գալբէրգ, այդ այն Փօղսօնի և ընկերութեան մօտ ծառալող երիտասարդը չէ արդեօք. նա վաղուց արդէն գուրս է եկել շոգենաւից և երիս հիմայ տանն է ու սպասում է իւր մայրիկին», ասաց նա ժպտալով ու գլխարկը հանելով:

— «Նուտ, շուտ տուն տար, Օհան» հրամայեց կառապանին, հինգ մարկ գցելով զարմացած նստաստիկ առաջ:

Իսկ Ֆէրդինանդը շոգենաւից դուրս գալով, ամենակարճ ճանապարհն ընտրեց և ըշտապ-շտապ գնաց տուն, այսպէս որ նա չհանդիպեց իրանց կառքին: Նա համոզուած էր, դիպեց իրանց չի գալ դիմաւորելու և մի որ հայրը իրան չի գալ դիմաւորելու և մի ինչ որ ներքին ձայն կարծես նորան ասում էր՝ թէ դու իրաւունք չունես սեփական շը-

քեղ կառքով վերադառնալ այն տունը, որից փախար խալտառակ կերպով: Եւ այդպէս, Ֆէրդինանդը բաբախող սրտով և արագ քայլերով մօտեցաւ իրանց տանը: Ոչ ոք չէր կարող ճանաչել, թէ այդ բարձրահաստկ, խիտ մօրուքով ու գեղեցիկ տղամարդն առաջուայ քընքոյշ Ֆէրդինանդն է: Նա համեստ կերպով զանդահարեց: Դուռը բաց անող ծառան իսկոյն գուշակեց թէ եկողն ով է և ուզում էր արդէն տան մէջ աղմուկ բարձրացնել, բայց Ֆէրդինանդը պատուիրեց նորան լուել: Արտասուքը վազում էր նորա այտերի վերայից և յուզմունքից սիրտը սաստիկ տրոփում էր, երբ նա ամուռ քայլերով մօտեցաւ հօր սենեակին: — Ծերունին մենակ նստած, անհամբեր սպասում էր կառքի վերադարձին:

Յանկարծ դուռը կամաց բացուեց, երևաց մի տղամարդու սիրուն երես, որը լալագին ձայնով հարցրեց՝

— «Հայրիկ, Ֆէրդինանդը կարող է ներս մտնել»:

— «Իմ գաւակս, իմ սիրելի՝ որդիս» ուրախութիւնից ճշաց հայրն իւր տեղից վեր թըռչելով և մինչև որ Ֆէրդինանդը պատրաստւում էր չոքել հօր առաջ, նա որդուն բըռնեց և սեղմեց իւր կրծքին:

Այդ տեսակցութեան քաղցր ըոպէներից յետոյ, Գալբէրգը նոր սկսեց իւր տղային զըննել ոտից մինչև գլուխ և չէր կշանում նորա վերայ նայելուց, այնքան էր Ֆէրդինանդը

փոխուել, առոյգացել ու գեղեցիկ տղամարդ դառել: Նորա զուարժ գէմքը, խոպոպ մազերը, մեծ-մեծ աչքերն ու ձայնը հանգուցեալ մօրն էին լիշեցնում. բայց բերանը, բարձր հսսակն ու շարժմունքների մէջ իրան ազատ պահելը, նորա ամբողջ կազմուածքին տալիս էին մի առանձին տեսակ գեղեցկութիւն և մեծ նմանութիւն հօր հետ:

Վերջապէս հաւաքուեցին բոլոր տնեցիք, եկաւ և հօրաքոյը Մարիամը, որը մէկ լալով մէկ ծիծաղելով բարկանում էր իւր սիրելի Ֆէրդինանդի վերայ, որ նա իրան տինքան սպասեցնել տուեց նաւահանգստի մօտ: Ֆէրդինանդի գալը հօրաքրոջը միանգամայն երջանկացրել էր: Ծառաներն, աղախինները, խոհարարուհին, ամենքն էլ ուզում էին տեսնել Ֆէրդինանդին, սեղմել նորա ձեռքը: Եւ Ֆէրդինանդն ամեն մէկի համար էլ մի քաղցը խօսք էր գտնում ասելու: Պետրոսի մայրն էլ ամենքի առաջն անցնելով, ասաց՝

— «Իմ որդիս իւր բաղդով ձեզ է պարտական, նա հիմայ արդէն նաւավարի պաշտօն է ստացել»:

— «Դուք ինձանից շնորհակալ մի լինէք» լրջութեամբ պատասխանեց երիտասարդ Ֆէրդինանդը. «Աստուծոյ ողորմութիւնը մեզ հանեց սխալմունքից, տարաւ մեզ ճշմարիտ ճանապարհով և մեզ իսկական մարդ դարձրեց: Շատ անգամ տանից փախչող, անհնազանդ տղայոց վիճակն այսպէս լաջող չի վերջանում:

Ես երբեմն սարսափով մտածում էի՝ թէ կարող
է պատահել, որ էլ բոլորովին չտեսնեմ իմ
թանկագին հօրս։ Իսկապէս այսպիսի երջան.
Կութեան արժանի չէի ես. — և օր ու գիշեր
աղօթում էի Աստծուն, որ պահպանէ իմ հօ-
ըքս և նա լսեց աղօթքս։

Ո.մենքն էլ շատ յուզուեցին, լսելով նորա
այդ սրտաշարժ խօսքերը։

Այդ օրուանից Ֆէրդինանդը մնաց իւր
հայրական տան մէջ և նորանով պարձենում
ու հպարտանում էր ծերունի հայրը։ Ֆէրդի-
նանդն աշխատասէր, ինայող ու գործունեալ
մարդ դառաւ։ Նա գաղտնի կերպով շատ էր
օգնում աղքատ, թշուառ մարդկանց և
ամենքից սիրուած ու յարգուած էր։

Ոյժմ նա հօր գործերն է կառավարում.
պատիւ վայելով վաճառական է, ամուսնացած
է և շրջապատուած երեխաներով, որոնց
կրթում է սիրով, բայց շատ խիստ է դէպի
նոցա պակասութիւնները և մեծ պապի երես
տալուց նոքա չեն փչանում, որովհետև ֆէր-
դինանդը շարունակ հսկում է նոցա վերայ։

Բայց չնայելով իւր այդ բազգաւոր կեան-
քին, նա շատ անգամ լիշում է երիտասար-
դութեան ժամանակ արած սխալները և մեծ
շնորհակալութեամբ ու երախտագիտութեամբ
է վերաբերում դէպի կեանքի խիստ, բայց
բարերար դպրոցը։

1450

ՆՈՐ ՄԱՏԵՆԱԳԻՐԸՆ

1. Խոռլ Խաչիկ, պատմական վեպիկ. Քամալս նո
Ս. 1894.
2. Ֆէրիզադէի Երգը, Փոքր Ասիայի կեանքից
թարգմ. Յ. Լալայեանց 1894 . . . — 25
3. Ղարիբ Մշեցի պատկ. տաճկահայ. ներկայ
կեանքից 1894 — 10
4. Հուքալէյ. Տարերը բնական գիտութեանց.
Ժողովրդ. Ընթերցանութեան համար գերմ.
թարգ. Իս. Յարութիւնեանց 1894 . . — 40
5. Վահան Մամիկոնեան Ճաղարբէգեան Յ. 1894 — 40
6. Ալպեան Հովիւ, գերմ. թ. Իս. Յարութիւ-
նեանց 1895 — 20
7. Հայրենագուրի, գերմ. թարգմ. Իս. Յարու-
թիւնեանց 1896 — 50
8. Գիւղական վարժուհի, Զիամկոլիի, թարգմ.
Լ. Մելիք-Աղամեանի 1897 — 25
9. Հովհանն. Զինուոր Յակոբ, գերմ. թ. Տիր.
Կոստանեան. 1897 — 7
10. " Կեանքի գովոց, գերմ. թ. Տիր.
Կոստանեան 1897. — 10



2013

